

Վ. Լուսկեվիչ՝ «Բնորոշելու երկու Մեծ Թագավորութիւններէ», փոխադրեց Յ.
Ք. Սառիկեան. Ս.-Պետերբուրգ, 1903, գ. 30 կոպ.

Երկրագնդի գօտիների մասին համառօտ տեղեկութիւն տալուց յետոյ՝ հեղինակը նկարագրում է զանազան գօտիներում ապրող կենացնիներին և բոյսերը: Ըսթերցողի առաջ բացւում են բազմաթիւ հետաքրքիր տեսարաններ, և՛ հիւսիսի սառցային անհուն տարածութիւններն իրանց սակաւաթիւ բնակիչներով, և՛ Սիբիրի տունդրան իր ողորմելի բուսականութեամբ, ասըզ զատերև ու տերեւաւոր անտառները՝ իւրաքանչիւրը իրան յատուկ բնակիչներով, և՛ տաք երկրների հրաշալի բուսականութիւնը... նկարագրութիւնը յաջող է, լեզուն պարզ և գրաւիչ, ինչպէս և հեղինակի միւս գրուածքներում: Թէկ հայր Սառիկեանը փոխադրութիւն է անուանում իր աշխատութիւնը, բայց իսկապէս դա թարգմանութիւն է (Կրճատումներով): Հ. Սառիկեանը անկարող է եղել պահպանել ամբողջովին հեղինակի ոճի գեղեցկութիւնը, շատ տեղ նկատւում է օտար լեզուի ազգեցութիւնը (օր. էջ 50), կան նաև անաջող թարգմանուած տերմիններ, մէկ տեղ էլ բնագրի մէջ մտած սրբագրական սխալը չը նկատելով հ. Սառիկեանը ինքը ևս սխալմունքի մէջ է ընկել գրելով «Էկվալիպտներ» փոխանակ «Էկվալիպտներ» ևայն:

Սակայն չը նայած վերոյիշեալ թերութիւններին, այսուամենայնիւ գտնում ենք հայր Սառիկեանի աշխատութիւնը օգտակար. ցանկալի է, որ այդ գրքոյիկը լայն կերպով տարածուէր ժողովրդի մէջ: Գրքոյիկը զարդարուած է բազմաթիւ գեղեցիկ պատկերներով:

Բ.

«ՀԱԶԱՐ ՈՒ ՄԻ ԽԱՆ». ժողովրդ. երգաւան. խմբագրեցին Կոմիտաս վարդ. եւ Մանուկ Աբեղեան. 1903 թ. Վաղարշապատ:

Մինչև այժմ մեր ժողովրդական երգարանները թէ բռվանդակւթեան և թէ եղանակների կողմից մեծ մասամբ իւղաթիւրումների են ենթարկուել: Երբ լսեցինք թէ ժողովրդական երգերի հրատարակութեան ձեռնամուխ են եղել Կոմիտաս վարդապետն և Մ. Աբեղեանը, մենք ուրախացանք, որովհետեւ գիտենք հայր Կոմիտասի հմտութիւնը ժողովրդական եղանակների և պ. Աբեղեանի գիտական պատրաստութիւնը առնասա-